

Ֆերահեան Վարժարանի Վերամուտի Ծնողա-Ուսուցչական Հանդիպումը

Հինգշաբթի, Սեպտեմբեր 17ի երեկոյեան ժամը 7-ին տեղի ունեցաւ Ազգային Ֆերահեան երկրորդական վարժարանի ծնողա-ուսուցչական առաջին հանդիպումը, 2009-2010 տարեշրջանին համար: Ինչպէս նախորդ տարիներուն, այս տարի եւս, հանդիպումին գլխաւոր նպատակն էր ծնողներուն ներկայացնել ուսումնական նոր տարեշրջանի կրթական ծրագիրը, որպէսզի ծնողները ծանօթանալով ընդհանուր ծրագրին եւ դասատուներուն, իրենք եւս կարենան մօտէն հետեւիլ իրենց զաւակներուն կրթութեան աշխատանքին:

Դպրոցի տնօրէնը՝ Պրն. Ժան Գոսազեան, իր բացման խօսքին մէջ նախ անդրադարձաւ դպրոցի աշակերտական եւ ուսուցչական պատկերին, ներկայացուց դպրոցի նոր ուսուցիչները եւ ապա վստահեցուց ներկաները, որ դպրոցի անձնակազմը, Ուսումնական Մարմինը եւ Ազգային Վարժարաններու ԽՆամակալ Մարմինը իրենց կարելին պիտի ընեն աշակերտներուն ապահովելու կրթական բարձր մակարդակ: Ան այս առիթով շնորհակալութիւն յայտնեց ծնողներուն, որոնք հաւատալով Ազգային վարժարանի նպատակին, իրենց զաւակներուն կրթութիւնը կը վստահին այս հաստատութեան, նույնիսկ տնտեսական տագնապի այս դժուար օրերուն. փոխադարձաբար, վարժարանը եւ պատկան մարմինները իրենց կարելին ի գործ պիտի դնեն, իսկ ծնողներուն օգտակար ըլլալու նպատակով, դպրոցը որոշած է չբարձրացնել կրթաթոշակները

Պարոն տնօրէնին խօսքէն ետք, ծնողները, իրենց զաւակներու դասացուցակին հիման վրայ, բաժնուեցան դասարանները, հետեւելու համար իրենց զաւակներուն օրուան մը ծրագրին. իւրաքանչիւր դասատու, իր կարգին, ներկաներուն բացատրեց իր տարեկան ծրագիրը:

Ուրախալի եւ քաջալերելի էր տեսնել բազմաթիւ ծնողներու ներկայութիւնը եւ տրուած բացատրութիւններուն լրջութեամբ հետեւիլը, ինչ որ ուսուցիչներուն համար գօտեպնդող երեւոյթ էր: